

Ակադեմիկոս Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

ՀԵՐՄԵԱՅ ԵՌԱՄԵԾԻ ԱՌ ԱՍԿՂԵՊԻՈՍ ՍԱՀՄԱՆՔ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

1. Հերմես Եռամեծի կրոնական-փիլիսոփայական այս «Մահմանք» գրվածքի հայերեն թարգմանությունը, որ առաջին անգամ լույս է տեսնում մեր այս հրատարակությունում, արժանի է առանձին ուշադրության, որովհետև իր ուրույն ու արտասովոր իմաստասիրական բովանդակության շնորհիվ սա հատուկ տեղ է գրավելու թարգմանական հայ գրականության մեջ:

Ուշագրավ է առանձնապես նաև այս գրության հեղինակի խնդիրը, որ կարոտ է հատուկ պարզարանման:

Ինչպես հայտնի է պատմագիտական ուսումնասիրություններից, Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքը դառել էր մակեդոնական-հունական և հռոմեական տիրապետության ժամանակ համաշխարհային մեծ կենտրոն և այնտեղ տեղի էր ունենում, Արևելքի և Արևմուտքի ժողովուրդների բուռն և սերտ հաղորդակցության ու հարաբերությունների հետևանքով, կրոնների միաձուլում: Աղեքսանդրիան մեծ դեր էր կատարում այդ ժամանակ նաև իբրև հունական ու արևելյան կուլտուրաների մերձեցման ու փոխադարձ ազդեցության բեղմնավոր մի միջավայր:

Հունական փիլիսոփայությունը, գլխավորապես սղատոնականը՝ յուրահատուկ կերպով այստեղ զուգակցվեց կրոնական արևելյան միստիկայի հետ և Աղեքսանդրիայում շնորհիվ դրան առաջացան նոր փիլիսոփայական դպրոցներ՝ երբայական-աղեքսանդրյանը, նորպլիթագորականը և նորսղատոնականը: Կրոնա-փիլիսոփայական նոր այս ուղղությունը նկատելի է, մասնավորապես, Փիլոն Երբայեցու (մհ. 50 մեր թվ. հ.) երկերում ու նաև ավելի ուշ շրջանի նորսղատոնականների՝ Պղոտինոսի (204—269), Յամբլիկոսի (մհ. 333 մեր թվ. հ.), Պրոկղոսի (410—485) և սրանց հետևորդների աշխատություններում:

Պետք է մատնանշել, որ նորսղատոնականության վրա, որը կենտրոնացած էր Աղեքսանդրիայում, մեծ ազդեցություն էր գործել, հատկապես, նաև հրեական-քրիստոնեական գնոստիցիզմը, որը խառնուրդ էր արևելյան ազդեցության տակ գտնվող սղատոնական ու նորպլիթագորական մտահայացքների և քրիստոնեական դավանության հավատալիքների:

Հենց այս կրոնական-իմաստասիրական երկերի շարքին են պատկանում այսպես կոչված «Հերմեսյան գրվածքները», այսինքն՝ այն աստված-իմաստական բնույթի գրականությունը, որի հեղինակն էին համարում եգիպտական Թոթ աստծուն: Այս վերջինին հույները համապատասխան էին



ընդունում իրենց Հերմես աստծուն, ուստի և նրան վերագրված երկերը սրանք կոչում էին «Հերմեսյան»:

Ինչպես այժմ պարզված է, հին եգիպտացիներն իրենց բոլոր կուլտուրական նվաճումները, գրանց թվում նաև գիրն ու գրականությունը, ենթադրում էին իրրև երկնքի շնորհում և աստվածների հայտնագործություն: Նրանց կարծիքով, գրի հնարողը և գրականության ու գիտություն հովանավորողը իրենց իմաստուն Թոթ աստվածն էր: Եկեղեցական հայր Կղեմես Աղեքսանդրացին (մհ. 217), որը շատ լավ ճանաչում էր Եգիպտոսը և ծանոթ էր նրա հին ավանդություններին՝ վկայում է, որ այնտեղ կային 42 «Հերմեսյան երկեր», որոնցից 36-ը պարունակում էին եգիպտական փիլիսոփայությունը, որ սովորում էին քուրմերը: Ավելի ուշ ժամանակներում հիշատակվում են հարյուրավոր և հազարավոր Թոթ-հերմեսյան գրվածքներ<sup>1</sup>:

Բոլոր այդ գրվածքները ինչպես պարզված է այժմ, սերտ կապ ու առնչություն են ունեցել եգիպտական տաճարների հետ և համարվել են սրանց սրբազան գրքերը և կղել են, անշուշտ, եգիպտական քուրմերի երկասիրությունները: Ուշագրավ է առանձնապես, որ Թոթ-Հերմեսյան գրական-գիտական ստեղծագործությունների շարքին պատկանել են, բացի իմաստասիրական ու աստվածաբանական երկերից, նաև տիեզերագիտական, բնախոսական, բժշկական, քերականական և այլ երկասիրություններ: Սրանց բոլորի մասին մանրամասն տեղեկություններ է տալիս Ռ. Պիչմանը Հերմես Եռամեծի անձնավորությունն ու երկերին նվիրված իր ուշագրավ ուսումնասիրություն մեջ<sup>2</sup>:

2. Կրոնա-իմաստասիրական և բժշկական մի քանի երկեր, որ վերագրված են «Հերմես Եռամեծ»-ին, այսինքն՝ հին եգիպտական Թոթ-Հերմես աստծուն, պահպանվել են ու մեր ձեռքն են հասել մասամբ հունարեն լեզվով, մասամբ էլ լատիներեն ու արաբերեն թարգմանությամբ<sup>3</sup>:

Հերմեսին վերագրված հունարեն երկերից ամենագլխավորն է Պոյմանդերը, որ հատուկ գրվածք է բարի հովիվի մասին: Այս երկը ժողովածու է 14 փիլիսոփայական հրահանգների, որոնց միջոցով Հերմեսը իր Թոթ որդուն և Ասկլեպիոս աշակերտին սովորեցրել էր աստվածային գիտությունը<sup>4</sup>: Նման բնույթ ունեն Ասկլեպիոսի աված խրատներն Ամմոն թագավորին, Ստրեոսի ժողովածուի մեջ բերված քաղվածքները ու նաև լատիներեն լեզվով պահպանված Կեղծ-Ապուլեյուսի թարգմանությունը «Ասկլեպիոս կամ Հերմես Եռամեծի արամախոսությունը» (Asclepius sive dialogus Hermetis Trismegisti)<sup>5</sup>:

<sup>1</sup> См. Тураев В. А., Египетская литература, т. I, Москва, 1920, стр. 9.

<sup>2</sup> Dr. Richard Pietschmann, Hermes Trismegistos nach ägyptischen, griechischen und orientalischen Ueberlieferungen, Leipzig, 1875.

<sup>3</sup> См. W. Christ, Geschichte der griechischen Litteratur, dritte Auflage, München, 1898, стр. 836.

<sup>4</sup> Հրատարակված է 1854 թ. Բեռլինում՝ Parthey, Hermelis Trismegisti Poemander, Berl. 1854. Իրրև հավելված տպագրված են նաև «Ասկլեպիոսի աված խրատներն Ամմոն թագավորին» (Paris, 1554). См. Christ, Geschichte der griechischen Litteratur, 1898, էջ 836:

<sup>5</sup> Հերմես Եռամեծի կրոնա-իմաստասիրական այս երկերը թարգմանել է ֆրանսերեն Մենարը՝ L. Menard, Hermès Trismégiste, trad. compl. précédée d'une étude sur l'origine des livres hermétiques, Paris, 1866.



Վերոհիշյալ երկերը, ինչպես մատնանշում է Յելլերը, գրված են, հավանորեն, երբորդ դարի վերջերում մեր թվականությունից հետո: Յելլերը մատնանշում է, որ Հերմեայ Եռամեծի Պոյմանդեր գրվածքին ծանոթ է եղել եկեղեցական հայր Լակտանտիուսը (250—330)<sup>1</sup>:

Որ Հերմեային վերագրված հունարեն երկերը, իրապես, ուշ շրջանի գրվածքներ են՝ այդ մատնանշել է վերոհիշյալ իր աշխատության մեջ (էջ 33—34) նաև Պիլմանը:

«Այսպես կոչված Հերմեայան գրվածքների հորինման ժամանակ, —ասում է Պիլմանը, — Թոթի նույնությունը Հերմեայի հետ արդեն այնքան մոռացվել էր, որ հնարավոր էր համարվել ընդունել երկուսին իրրև տարբեր անձնավորություններ»:

Մեր ձեռքը հասած երկերում, ինչպես նշում է Պիլմանը, Հերմեսը համարվում է Թոթի հայրը և Ասկղեպիոսի ուսուցիչը:

Բացի կրոնա-իմաստասիրական բովանդակություն ունեցող երկասիրություններից իրրև Հերմեայ Եռամեծի աշխատություն մեր ձեռքը հասել է նաև բժշկական մի գրվածք, որը տպագրված է Իդելերի հրատարակած «Phisici et medici graeci» երկհատորյակում<sup>2</sup>:

Բոլորովին նոր մի գրվածք է ներկա հրատարակությամբ լույս տեսնող «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս սահմանք»-ը: Այս հետաքրքիր հատվածը, որի հունարեն սկզբնագիրը, ըստ երևույթին, մեզ չէ հասել՝ խմբակից է, ինչպես երևում է նրա բովանդակությունից, վերոհիշյալ հունարեն գրված երկերի շարքին: Հայերեն թարգմանության կարևորությունը, անշուշտ, խիստ մեծ է, որովհետև սրա հունարեն սկզբնագիրը, հավանորեն կորած է:

3. Հերմեայի «Եռամեծ» մականվանը նորագույն երկերում տրվում է տարբեր մեկնություն: Ակադ. Ժերելևի կարծիքով, Հերմեսը «Եռամեծ» է անվանվել Շարպես թագավոր, մարգարե և փիլիսոփա<sup>3</sup>: Ավելի ճիշտ է ըստ իս Լեարոնի կարծիքը<sup>4</sup>, որը մատնանշել է, որ «եռ»-ի հետ կազմված մակդիրները հունարենում ունեն սշ թե երեքության, այլ գերազրականի իմաստ ուստի և «Եռամեծ» նշանակում է պարզապես, ինչպես ուղիղ մեկնել են նաև Հայկազյան բառգրքի կազմողները՝ «Երիցս մեծ, կարի մեծ, մեծանուն»: Լակտանտիուսի վկայությամբ՝ Հերմեսն արժանացել էր «եռամեծ» անվան իր առաքինության և բազմաթիվ արվեստների գիտության պատճառով<sup>5</sup>:

Հայոց մատենագրության մեջ «եռամեծ» մակդիրը հայտնի է դառել, հավանորեն, Հերմեայ Եռամեծի Սահմանքը թարգմանվելուց հետո: Այնուհետև, ըստ երևույթին, այդ թարգմանության աղբյուրությամբ «Եռամեծ» են անվանվել Դավիթ Անհաղթը և ապա ուշ միջնադարում նաև այլ հեղինակներ:

Հերմեայ Եռամեծը, ինչպես տեսնում ենք, գոյություն չունեցող մտա-

<sup>1</sup> Տես Ed. Zeller, Philosophie der Griechen, III<sup>3</sup>, 2 p., էջ 224 եւս:

<sup>2</sup> Տես J. L. Ideler, Phisici et medici graeci, vol. I, Berolini, 1841, էջ 430—440:

<sup>3</sup> Տես С. А. Жебелев, Римская Империя, Петроград, 1923, էջ 91:

<sup>4</sup> Տես Letronne, Inscription grecque de Rosette, Paris, 1841, էջ 20:

<sup>5</sup> Տես R. Pietschmann, Hermes Trismegistos, էջ 36: Համեմատե նաև Lactantius



ցածին հեղինակ է, որին վերագրվել են եգիպտական-հունական ծագում ունեցող աստված-իմաստական և այլ գիտական երկեր: Հերմեսի երկերն ուսումնասիրողները նրա թեոսոփիական ուսման մեջ ցույց են տալիս երեք գլխավոր տարրեր՝ եգիպտական բազմաստվածություն, հրեական-քրիստոնեական միաստվածություն և հունական փիլիսոփայական իդեալիզմ<sup>1</sup>: Ըստ այդ ուսման աստված «միտք» (νοῦς) է, որ ծնունդ է տալիս «բանին» (λογος), աստված «բանի» միջոցով ծնունդ է տալիս նաև ստեղծագործական մտքին: Աստվածությունն առանձնահատուկ է ստեղծագործությունը երկնքում, իսկ մարդուն՝ երկրում: Հերմեսի փիլիսոփայությունը, ինչպես կարծում են, ըստ իր էություն մոտ է գնոստիցիզմին:

Հերմես Եռամեծի երկերի մասին վերջերս լույս են տեսել Կրոլի և Ռեյտցենշտեյնի աշխատությունները<sup>2</sup>, որոնց մեջ նրանք նորից քննություն են անել այդ երկերի բովանդակությունը:

4. Հերմես Եռամեծի Սահմանքի հայերեն թարգմանության ժամանակը կարելի է որոշել, հիմնվելով լեզվաքննական այն գիտողությունների վրա, որ մանրամասն մեջ են բերված իմ «Հունարան գալրոցը և նրա զարգացման շրջանները» աշխատության մեջ (Վիեննա, 1928):

Կրոնա-իմաստասիրական այս երկը, ինչպես գծվար չէ համոզվել, թարգմանված է, հավանորեն, Պիտոյից-Փիլոնյան խմբի երկերից հետո և խմբակից է մեր մասնանշած հունարան թարգմանությունների երկրորդ խմբին, որին պատկանում են «Տիմոթեոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակաճառությունը» և Յամբղիկոսի խմբի արիստոտելյան երկերը<sup>3</sup>:

Սահմանքի թարգմանություն մեջ գործ էածված Պիտոյից-Փիլոնյան խմբի հատուկ բառապաշարը, որ չէ հանդիպում սակեղարյան անվանված հինգերորդ դարի մատենագրական երկերում: Այսպիսի առանձնահատուկ բառեր են.

1. «Անրեղուն» — ունեն նաև Փիլ. Ժ. բան. Պիտ. 392. Փարպ. «Բազմարեղուն» Փիլ. լին. Գ. 44, էջ 216. «բեղնաւոր, անրեղնաւոր» Պիտ. 487, 459. Փիլ. Նախ. 45 են:
2. «Անորակ» — ունեն նաև Փիլ. լին. Գ. 171, էջ 376. Փիլ. այլար. էջ 117. Յադ. Յառ., էջ 79. Էլիաս, էջ 95. Գ. Պորփ. 307 են:
3. «Բաղդատություն, բաղդատեմ» — Թր. քեր. 15. Փիլ. լին. 68, 134, 215, 412 են. Փիլ. տես. 6 Պիտ. 357, 386 են. Իրեն. Հերմ. 13, 102, 165. Թէոն 6, 16, 24 են. Իրեն. Յոյցք 60. Գ. Սահմ. 130. Յամբլ. Ստոր. 87 են:
4. «Բաղկացություն, բաղկանամ» — Փիլ. լին. Բ. 55, էջ 136. Գ. 241, էջ 437. Փիլ. Յադ. Յառ. 4. տես 24. Թր. Քեր 8, Պիտ. 389. Տիմ. Կուղ 121,

<sup>1</sup> См Жебелев, Римская Империя, էջ 93: Համեմատե Н. М. Карпинский, Жизнь Аполлония Тианского, журнал Министерства Нар. Просв., 1876, № 1, նաև Д. И. Писарев, Аполлоний Тианский, Русское Слово, 1861, № 6-8.

<sup>2</sup> См F. Kroll, Die Lehren des Hiermes Trisnegistos. Münster, 1914 R. Reitzenstein, Heid Ak. Sitzungsberichte, 1917, № 10. նույնը, Iranische Erlösungsmysterien, Bonn, 1921.

<sup>3</sup> См իմ աշխատությունը—«Հունարան գալրոցը», Վիեննա, 1928, էջ 124—142:



- 276, 279, 313 ևն. Իրեն. Հերձ. 9, 62. Ար. Ստոր. 383. Յամբ. Ստոր. 410, 422. Յամբ. Պերիարմ. 499. Ներ. Պորփ. 237. Դ. Սահմ. 193, 197 ևն:
5. «Գերաշխարհիկ» — Պիտ. 371, 417. «գերաշխարհականք» Տիմ. Կուզ. 26.
6. «Գոյացութիւն» — Փիլ. տես. 7. Պիտ. 376. Իրեն. Հերձ. 29. Յոյցք 5. Տիմ. Կուզ. 13—15, 19—22 ևն. Ար. Ստոր. 4. Յամբ. Ստոր. 410. Յամբլ. Պեր. 494. Ներ. Պորփ. 231 Դ. Պորփ. 313. Դ Սահմ. 121 ևն.
7. «Եղանել, եղանելի, անեղանելի» — Փիլ. լին. Գ. 41. էջ 210. Տիմ. Կուզ 58, 100 ևն. Իրեն. Յոյցք 4.
8. «Ենթակայ» — Փիլ. Այլար. 113—115 ևն. Պիտ. 510. Տիմ. Կուզ. 24. 255, 339. Իրեն. Հերձ. 142, 201. Ար. Ստոր. 360 ևն. Յամբ. Պեր. 496. Վերլ. 571. Դ. Պորփ. 260. էլ. Ստոր. 29 ևն:
9. «Էակ» — Իրեն. Յոյցք. 3. Տիմ. Կուզ. 22, 26—28, 33. Ար. Ստոր. 360. Յամբ. Պեր. 493. Ներ. Պորփ. 232. Դ. Սահմ. 125. Դ. Պորփ. 265. էլ. Ստոր. 39. Ար. Աշխ. 616 ևն:
10. «Ընդունական» — Թր. Քեր. 22, 26. Իրեն. Հերձ. 124.
11. «Զոյնաւոր» — Թր. Քեր. 5, 9—12, 41. Փիլ. լին. Գ. 43, էջ 212. Ար. Աշխ. 617. Իրեն. Հերձ. 227.
12. «Միակք» — Փիլ. լին. Գ. 110, էջ 332 Ժ. րան, էջ 229. Դ. Սահմ. 135 ևն.
13. «Ներգործութիւն, ներգործեմ» — Թր. Քեր. 22, 23, 45 ևն. Փիլ. լին. Գ. 5, էջ 177. Գ. 21, էջ 261. Փիլ. Սահմ. 551 Իրեն. Հերձ. 49, 69, 76, 99, 110, 113. Իրեն. Յոյցք 26. Թէոն 38, 46 ևն. Տիմ. Կուզ 17, 22 ևն. Ար. Պեր. 471. Յամբլ. Պեր. 502. Յամբլ. Ստ. 448 ևն.
14. «Շաղկապ» — Թր. Քեր. 12, 35. Փիլ. Յաղ. Յառ. 83. Իրեն. Հերձ. 158 Արիստ. Պեր. 465. Յամբ. Պեր. 489. Թէոն 94. Դ. Պորփ. Վերլ. ևն.
15. «Որակ», «որակութիւն» — Փիլ. լին. Գ. 181, էջ 383. Փիլ. տես. 7. Պիտ. 464. Իրեն. Հերձ. 171. Տիմ. Կուզ 324. Թէոն 170, 172. Ներած. Պորփ. 235, 246. Ար. Ստոր. 362. Յամբ. Ստոր. 410 — 430 ևն.
16. «Պարունակեմ» — Թր. Քեր. 2, 18. Փիլ. լին. 1, 119, 223. Պիտ. 354, 415. Իրեն. Հերձ. 14, 41, 64, 144, 226. Իրեն. Յոյցք 8. Տիմ. Կուզ 83, 270. Ներած. Պորփ. 228, 242. Յամբ. Ստոր. 413. Յամբ. Պեր. 495.
17. «Սերուն» — Փիլ. լին. Գ. 209, 412 Փիլ. այլար. ևն. «անսերութիւն» Փիլ. լին. Բ. 81, էջ 165. Ժ. րան ևն.
18. «Տեսակ» — Փիլ. տես. 7. Յաղ. Յառ. 80. Թր. Քեր. 12, 17. Պիտ. 387. Տիմ. Կուզ 11, 15, 57 ևն. Իրեն. Յոյցք 21. Ար. Ստոր. 361. Յամբ. Ստոր. 413. Ներ. Պորփ. 227. Վերլ. 558. Դ. Պորփ. 253. Դ. Սահմ. 168 ևն. էլ. Ստոր. 29 ևն.
19. «Փոխարկեմ» — Տիմ. Կուզ 62. Նոննոս 74, 80. էլ. Ստոր. 132.
20. «Քանակ, անքանակ» — Փիլ. լին. Գ. 181, էջ 383. Թր. Քեր. 32. Ար. Ստոր. 372. Յամբ. Ստոր. 410. Վերլ. 573. Դ. Պորփ. 257. Դ. Սահմ. 125 ևն:

Գանվելով հունարան հնագույն թարգմանությունների բառապաշարի ու տերմինարանության ազդեցության տակ՝ Հերմես Եռամեծի Սահմանքի հայերեն թարգմանությունն ունի նաև լեզվափոփոխականական այն կարևոր առանձնահատկությունները, որ բնորոշ են հունարան թարգմանությունների առաջին և երկրորդ խմբերի համար:

Այս տեսակետից ուշագրավ է, ամենից առաջ, որ այս թարգմանու-



թյունը ևս գործ է ածում սէ, իդական դերանունը, որը հանդիպում է հունարան Պիտոյից - Փիլոնյան խմբի թարգմանություններում ու նաև Տիմոթեոս Կուզի Հակաճառության մեջ, որը հունարան երկրորդ խմբի հնագույն թարգմանությունն է:

Հերմես Եռամեծ — «Բնութիւն է հայելի ճշմարտութեան. սէ և անմարմնոցն է մարմին և աներևոյթիցն լոյս»։ սէ և նէ ունեն Փիլ. ալլար. 156. Հևս. 6. Պիտ. 375, 377, 380, 381, 383, 384. Իրեն. Հերձ. 85, 91, 140. Տիմ. Կուզ 26, 33, 35, 42, 194, 236 ևն:

Այն հանգամանքը, որ իդական սեռի արվեստական ու շինծու սէ դերանունը, բացի վերոհիշյալ հնագույն թարգմանություններից, գործ է ածված նաև Հերմես Եռամեծի Սահմանքի մեջ՝ մի նշան է, անշուշտ, որ այս դրվածքի թարգմանության ժամանակը մոտ եղած պիտի լիներ Պիտոյից - Փիլոնյան խմբի և Տիմոթեոս Կուզի Հակաճառության թարգմանությունների ժամանակաշրջանին:

Ուշագրավ է նաև, որ Հերմեսի Սահմանքի թարգմանության մեջ ևս, ինչպես և հունարան առաջին խմբի և Թեոնի թարգմանություններում, ն նախդիրը գործ է ածված հունարեն ἄπὸ նախդրի նշանակությամբ: Այսպես,

Հերմես Եռամեծ — «քանզի ցանկութիւն ոչ նիմեքե», համեմատե «նողւոյ», «նիմեքէ», «նորմէ», «նիմոյ» Թր. Քեր. 18, 19, 23, 29. «նառասպելէն և պատմութենէն» Թէոն 14.

Մի ուրիշ պարզ նշան է Հերմեսի Սահմանքի հայերեն թարգմանության և վերոհիշյալ հին թարգմանությունների սերտ առնչության նաև «մի» թվական անվան փոխարեն «մու»-ի գործածությունը: Օրինակ՝

Հերմես Եռամեծ — «մու գեղեցիկաստն բազկացութիւն», «բայց երկին մու և զոյգ ծովու և երկրի», «մու փրկութիւն»: «մու» ունեն նաև Թր. Քեր. 8, 15, 25. Փիլ. Լին. Դ. 110, էջ 332. Պիտ. 398, 473, 501, 503, 527. Տիմ. Կուզ 65, 68, 176, 201, 260, 267, 274, 311. Ար. Պեր. 468, 476, 505 ևն:

Հերմես Եռամեծի Սահմանքի հայերեն թարգմանության ժամանակը որոշելու համար մեծ կարևորություն ունի նաև այն, որ նրա մեջ գործ է ածված «ներհակ» բառը, որը առաջին անգամ հանդիպում է հունարան թարգմանությունների երկրորդ խմբում: Այսպես՝

Հերմես Եռամեծ — «և ներհականս էակացս իմանալ», նորաստեղծ «ներհակ» այս բառն ունեն Տիմ. Կուզ 169. Թէոն 50, 62, 66 ևն: Արիստ. Ստոր. 368. Յամբ. Ստոր. 413, 416, 417. Արիստ. Պեր. 466, 475 ևն: Հունարան առաջին խմբի Պիտոյից - Փիլոնյան երկերը փոխանակ «ներհակ» բառի ունեն «ընդդիմակ»:

Հեղվական բուրբ վերոհիշյալ դիտողություններն ի մի ամփոփելով, կարծում եմ, որ կարող ենք վստահորեն ենթադրել, որ «Հերմեսյ Եռամեծի



առ Ասկղեպիոս Սահմանք»-ը թարգմանված պիտի լինի հունարենից Պիտոյից - Փիլոնյան խմբի երկերից հետո, հավանաբար, վեցերորդ դարի երկրորդ կիսում կամ ամենավաղը՝ վեցերորդ դարի կեսերին: Նույն այս ժամանակամիջոցում, 552—556 թվականներին, թարգմանված էր, ինչպես պարզ ու որոշ ցույց է տրված իմ «Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները» աշխատության մեջ (էջ 95—102), հունարան թարգմանությունների երկրորդ խմբին պատկանող Տիմոթեոս Կուզի Հակաճառությունը<sup>1</sup>:

5. Մեր ստացած այս եզրակացության դեմ միակ առարկությունը կարող է այն լինել, որ «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանք»-ից օգտվել է, ինչպես այդ իր «Եղիշեի Արարածոց դրքի մեկնությունը» գիտերտացիայի մեջ ենթադրել է Լ. Խաչիկյանը, «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» աշխատության հեղինակը: Խաչիկյանի կարծիքով, Հերմեայ Եռամեծից է առնված Եղիշեի հետևյալ հատվածը.

1. Եղիշե, Վենետիկ, 1864, էջ 25 («Երկրորդ յեղանակ»)

«Որպէս և ասաց ոմն ի հնումն. Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է: Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ»:

2. Համեմատե Հերմեայ Եռամեծ՝

«մահ իմացեալ՝ անմահութիւն է, ոչ իմացեալն՝ մահ»:

Մեջ բերված համապատասխան վկայությունների համեմատությունից տեսնում ենք, որ Եղիշեի հատվածն ավելի բնդարձակ է, քան Հերմեայինը: Ուստի և դժվար է, իմ կարծիքով, անվերապահ կերպով պնդել, որ Եղիշեի Պատմությանը աղբյուր է ծառայել Հերմեայի Սահմանքը: Հայտնի է, որ նոր պատանական դպրոցի երկերը իրենց մեջ հաճախ պարունակում էին նման մտքեր և նման հատվածներ. ուստի և միանգամայն հնարավոր է, որ վերոնիշյալ հատվածը կարող էր Եղիշեն քաղած լինել որևէ այլ աղբյուրից: Իսկ եթե մենք ենթադրելու լինենք, որ Եղիշեն, իրապես, օգտվել է Հերմեայի «Առ Ասկղեպիոս Սահմանք»-ից, այդ դեպքում՝ մենք հարկադրված ենք լինելու նրա Պատմության գրության ժամանակը, որ դեռևս վերջնական կերպով որոշված չէ՝ իջեցնելու մինչև վեցերորդ դարի երկրորդ կեսը: Այս կարևոր խնդիրը կարոտ է, անշուշտ, հատուկ քննության առանձին հոգիվածում:

6. Առանձին ուշադրության արժանի է Հերմեայ իմաստասերի հիշատակությունը Գրիգոր Մագիստրոսի (11-րդ դար) Թղթերի հետևյալ հատվածներում.

1. Գրիգոր Մագիստրոս, հրատ. Կ. Կոստանյանցի, 1910 թ., Բ., էջ 5:

«Վասն որոյ ի ճան ինձ այժմ ևկեսցէ ճեմականն Եւրիպիզէս յիւրում տախտակի, սակս տորբանականին Տրոքոնեայ ասելով. Ով Տրո-

<sup>1</sup> Գալուստ Տեր-Մկրտչյանի և Արեղյանի կարծիքը, որ Տիմոթեոսի Հակաճառությունը թարգմանված է հայերենի 480—484 թվականների ժամանակամիջոցում (տես «Արարատ», 1908, էջ 564—589, «Շողակաթ», 1913, էջ 154—163 և Արեղյան, Հայոց հին դրականության պատմություն, 1, Երևան 1944, էջ 613—618), պարզապես թյուրիմացության արդյունք է և միանգամայն անբնական է:



քոնեայ, յորձև բախտի բարի գոլ կարծես՝ մակացու ի ծնէ կուրանց եթէ զկնի պատահման հանգունակի մակեղուտ անանջատ: Եւ զի զայսոսիկ ոչ այլ ինչ իմաստասիրէր բայց միայն վասն իւրոյ ումեմն Հերմեայ աշակերտի. զի նորա, թողեալ զիմաստասիրութեանն արհեստ, չոգաւ ի կենցաղական զեղխումն. իբրու թէ կոյր ի ծնէ եղեալ, զգայ զկուրութեանն, և ըղձայ տեսութեան, իսկ զկնի տեսութեան՝ ի պատահմանէ կուրեացեալ, յոյժ տարակուսելի է: Զոր բանս զքեզ ակն տունջեան անուանէ, և զմեզ կափուցեալս ի ճառագայթից և խրթնիս և խաւարչտին եղեալ: Սակայն առ այսոսիկ սուղ ինչ եթէ իմաստասիրեցից, ոչ պատկառելի է, այլ մանաւանդ փութալի. թէպէտ և ոչ աստուածպետականին հասին բախտի և օժման և մաքրութեան, սակայն կաթիլ իմն աստուածային առ նոսա կաթեալ:

2. Նույնը, ԼԲ, էջ 85.

«Ապականութիւն խոկալ երկոցունց մեծագունի աշխարհի և փոքու մանաւանդ եթէ արտաքոյ հրամանաց իմանալի աշխարհին. քանզի իմանալի աշխարհ աստուածային էութիւնն իմանի ըստ Հերմեոսեայ մեծի, իսկ փոքր մարդկայինս սեռ և մեծագոյն յորում բնակեալս եմք»:

3. Նույնը, Հ, էջ 182.

«Բայց Պդատոն փոքր ինչ իմաստասիրելով գերակատար գոյիցս ասելով կամեցաւ զարարչականն էութիւն յասելն իւրում այսպէս, թէ որ զամենեսեան ամեալ անեղական և մակաւասար բնութիւն, ի վերայ կալով ամենայնի նախախնամէ զամենեսեան, տեսանելով և ինքն ոչ յումեքէ տեսանի, այլ անցեալ կայ սարաւանդեալ յիւրումն առանձին բարձրութեան: Եւ Հերմեոսս (—Հերմէս Եռամեծ) մեծ շարժող զնա և տածող և իմանալի աշխարհ»:

4. Նույնը, ՀԱ, էջ 205.

«Այլ բնականքս այս թէպէտև յօդոյ սիմեոնիկոնն անուանեալ, սակայն մտաց և մակացութեան ընդունակ. վասն որոյ երկիր զսա կոչել աստուած ոչ պատկառի, Հերմեոսամած (—Հերմէս Եռամեծ), թէպէտև աշխարհ, բայց ի բազմաց աստուածս. վասն որոյ յիւրում սքանչելի տախտակին այսպէս հատանելով պարզև վճիտս. աստուած անշարժելի աշխարհ, երկին շարժուն աշխարհ, մարդ բանաւոր աշխարհ, երկիր, և միակք աստուած: Իսկ եթէ ոչ բանաւոր, զիմրդ մարդ. և եթէ ոչ իմաստուն, որպակ բանաւոր. և եթէ ոչ մակստացական, հիկէն իմաստուն. և որ ոչ իմաստուն, սրգոն մտաց և մակացութեան ընդունակ»:

Այս հատվածներից առաջինում հիշատակված Հերմեսը, որը Եվրիպիդես ճեմականի աշակերտն է եղել՝ անշուշտ, Հերմես Եռամեծը չէ, այլ, ինչպես ես կարծում եմ, նորպդատոնական Հերմիաս մեկնիչն է: Արիստոտելյան վերոհիշյալ անհայտ մեկնիչ Եվրիպիդեսը հիշատակված է նաև Ստեփանոս Մյունեցու «առ Տ. Գերմանոս» գրած թղթի<sup>1</sup> հետևյալ հատվածում.

«Իսկ ոմն յերկուցանձնաւորեալ, մի ասացաւ բնութիւն, որպէս մեկնէ Յիւրիպիդէս Աթենացի, զպարզսն անուանսն զսերմանեալսն յԱրիս-

<sup>1</sup> Տես «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 384:



տոտէլէ, ասացեալ եղջերուաքաղս ի ստորագութիւնն, ոչ միայն ի վերայ սլարդիցն ասէ, այլ և զշաղաշարարար կասկեցեալսն մի ասելի բնութիւնն:

Ինձ թվում է, որ Ստեփանոս Սյունեցին և Գրիգոր Մագիստրոսը կարող էին օգտւած լինել Արիստոտելյան այս անհայտ հեղինակի մեկնութեան հայերեն թարգմանութեանից, որի մեջ, հավանորեն, հիշատակւած է եղել և Եվրիպիդեսի աշակերտ Հերմեսը:

Իսկ Գրիգոր Մագիստրոսի մյուս հատվածները, որոնց մեջ հիշատակւած է Հերմես Մեծը կամ Հերմես Եռամեծը՝ վերաբերվում են, անշուշտ, «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս Մահմանք»-ին:

7. Կարևոր եմ համարում նաև հիշատակել, որ մեր հրատարակած այս գրվածքում հանդիպում են մի քանի նոր բառեր, որ չունեն նոր Հայկազյան և Առձեռն բառարանները: Այդպիսի բառեր են.

1. Անսերուն — շուր է գոյացութիւն անսերուն».
2. Պակալեմ — յորպէս պակալեսցէ ցանկութեամբ, որ յորովայնին է՝ սոյնպէս և մայրն ցանկայ. սոյնպէս և որ ինչ յանձինն պակալեսցէ ցանկութեամբ՝ դայս և մարդն ցանկայ».
3. Ամենակերպ, ամենորակ — շրնութիւն է ամենակերպ ի մարդումն և ամենորակ ներգործութիւն».
4. Պարիմացական — շրմացուած ունելով դիւր բանն պարիմացական».
5. Շարիմանամ — շրնութիւն շարիմանալով».

8. Հերմես Եռամեծի Մահմանքի սույն հրատարակութեան հիմք են ծառայել, բացի իմ սեփական մեկ ձեռագրից ( $=a$ ), նաև Պետական ձեռագրատան հինգ ձեռագրերը (b, d, e, f, i), որոնց նկարագրութեանը կարևոր եմ համարում մեջ բերել համառոտակի:

a = ձեռագիր իմ գրագարանի\*.

Թուղթք՝ 245: — Մեծութուն՝  $15 \times 10$ : — Տողք՝ 21: — Գիր՝ նոտրգիր: — Նյութ՝ ողորկ թուղթ: — Կաղմ՝ կաշեպատ տախտակ: — Հանգամանք՝ լաւ: — Թվական, գրիչ և տեղ՝ անհայտ:

Բովանդակութեան. — Թ. 3ա — 121ա. «Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ ասացեալ վասն բնութեան մարդոյ»: — Թ. 121բ — 210բ. «Գրիգորի եպիսկոպոսի երթորն Բարսղի տեսութիւն ի մարդոյ կաղմութիւն»: — Թ. 210բ — 216բ. «Հերմա Եռամեծի առ Ասկղեպիոս սահմանք»: — Թ. 217ա — 241ա. «Արիստոտելի իմաստասիրի յաղագս յամ (պատվ.) աշխարհի առ Աղեքսանդրոս թագաւորն»: — Թ. 241ա — 244բ «Արիստոտելի յաղագս առաքինութեան առ Աղեքսանդրոս թագաւորն»:

b = ձեռագիր № 2303 (2327) Պետական ձեռագրատան:

Թուղթք՝ 286. — Մեծութուն՝  $19\frac{1}{2} \times 13$ : — Տողք՝ 27 կամ 25: — Գիր՝ բոլորգիր: — Նյութ՝ ողորկ թուղթ: — Կաղմ՝ կաշեպատ տախտակ: — Հանգամանք՝ լավ: — Թվական՝ ՌՃ և մէկին ( $=1652$ ): — Գրիչ՝ Մարկոս սարկավագ:

\* Այժմ Մատենադարանի ձեռ. № 9427:



Բովանդակութիւն. — Թ. 2<sup>ա</sup> — 58<sup>բ</sup>. «Միմէսնի վարդապետի Ջուղայցւոյ արարեալ քերականութիւն ըստ լեզուի մերում հայկազանց»: — Թ. 59<sup>ա</sup> — 91<sup>բ</sup>. «Միմէսնի վարդապետի Ջուղայցւոյ արարեալ գորամարանութեան հաւաքումն»: — Թ. 92<sup>ա</sup> — 107<sup>ա</sup>. «Յաղագս շարամանութեանն որ է հատոր երկրորդ», — Թ. 107<sup>բ</sup> — 149<sup>ա</sup>. «Յաղագս շարամանութեանն որ է հատոր երրորդ»: — Թ. 149<sup>բ</sup> — 273<sup>բ</sup>. «Միմէսնի Գառնւոյ կայսկոսոսի արարեալ մեկնութիւն գրոցն Պրոկիլի»: — Թ. 274<sup>ա</sup> — 280<sup>ա</sup>. «Համառօտ հաւաքումն վասն մարմնոյ և հոգւոյ և որոց բաղկանայ մարմինն»: — Թ. 280<sup>ա</sup> — 284<sup>բ</sup>. «Հերմիտի իմաստասիրի ասացեալ»:

d = ձեռագիր № 419 (449) Պետական ձեռագրատան:

Թուղթք՝ 99: — Մեծութիւն՝  $24 \times 17$ : — Տողք՝ 32: — Նյութ՝ թուղթ: — Կազմ՝ կաշեպատ տախտակ: — Գիր՝ նոսր: — Վիճակ՝ բավարար: — Թվական՝ 1777 թ.: — Գրիչ՝ Գրիգոր դպիր:

Բովանդակութիւն — Թ. 1<sup>ա</sup>. «Յաղագս բնութեան մարդոյ»: — Թ. 7<sup>ա</sup>. «Երանելոյն Գրիգորի Նիւսայցւոյ ասացեալ վասն բնութեան մարդոյ»: — Թ. 93<sup>բ</sup> — 96<sup>բ</sup>. «Հերմա Եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանք»:

e = ձեռագիր № 538 (414) Պետական ձեռագրատան:

Թուղթք՝ 144: — Մեծութիւն՝  $13 \times 9$ : — Տողք՝ 23: — Նյութ՝ թուղթ: — Կազմ՝ կաշեպատ տախտակ: — Վիճակ՝ բավարար: — Թվական, գրիչ, տեղանհայտ, ունի 1595 թվի հիշատակագրութիւն:

Բովանդակութիւն՝ Ժողովածու է, որի մեջ Հերմես Եռամեծի Սահմանքը գտնվում է 113<sup>ա</sup> էջից սկսած մինչև 122<sup>բ</sup> էջը. վերնագիրն է՝ «Սահմանք Հերմիտ»:

f = ձեռագիր № 2269 (2285) Պետական ձեռագրատան:

Թուղթք՝ 112: — Մեծութիւն՝  $21 \times 15,5$ : — Տողք՝ 32: — Նյութ՝ թուղթ: — Գրութիւն՝ երկսյուն: — Կազմ՝ կաշեպատ տախտակ: — Վիճակ՝ բավարար: — Գիր՝ նոսր: — Ժամանակ՝ ԺԸ դար: — Գրիչ՝ տեր Հարութիւն:

Բովանդակութիւն՝ Ժողովածու է, որի մեջ Հերմես Եռամեծի Սահմանքը գտնվում է 87<sup>ա</sup> էջից սկսած հետևյալ վերնագրով՝ «Հերմես Եռամեծի առ Ասկիպիայ Սահմանք»:

g = ձեռագիր № 1500 (944) Պետական ձեռագրատան:

Թուղթք՝ 1188: — Մեծութիւն՝  $36 \times 26$ : — Նյութ՝ թուղթ: — Կազմ՝ կաշեպատ տախտակ: — Գիր՝ բոլորգիր (շղագրի որոշ գծերով): — Գրիչ՝ Մխիթար վարդապետ Այրիվանեցի: — Ժամանակ XIII դար: — Տեղ՝ Այրիվանք: — Հիշատակարան՝ գլխավոր հիշատակարանն ընկել է. ունի բազմաթիվ հիշատակագրութիւններ:

Բովանդակութիւն՝ Ճառքնար. տես Կարենյանց Հ., Մայր Յուցակ, Թ. 924, էջ 130 — 133:

Բացի այս օրինակներից՝ կա նաև մի ձեռագիր ևս (թ. 1838/1905 Պետական ձեռագրատան), որն ունի Հերմես Եռամեծի Սահմանքից մի հատված հետևյալ վերնագրով՝ «Հերմէսի Եռամեծի իմաստասիրի» (թ. 271<sup>ա</sup>): Այս հատվածի ընթերցվածները ծանոթութիւնների մեջ չեն նշանակված, որովհետև նրա մեջ չկան կարևոր ոչևէ ընթերցվածներ:



Սահմանքի քննական մեր հրատարակությանը գործակցել է պատմական գիտությունների թեկնածու Լ. Խաչիկյանը, որը սիրահոծար կերպով նշանակել է իմ *a* և *b* ձևագրերի բաղդատությամբ կազմված բնագրի չուսանցքում *d*, *e*, *f* և *i* ձևագրերի տարրեր ընթերցվածները, Լ. Խաչիկյանը ավել է նաև իր համեմատած չորս ձևագրերի մասին անհրաժեշտ տեղեկությունները: Նրա գործակցությունը մեծապես հեշտացրեց այս կարևոր բնագրի հրատարակությունը ձևագրերի համեմատությամբ. ուստի և հարկ եմ համարում հայտնել նրան իմ շնորհակալությունը:

Պետք է առանձնապես մատնանշել, որ Հերմես Եռամեծին վերագրված այս երկասիրությունը, շնորհիվ իր հեթանոսական խորթ ու արտասովոր բովանդակության, որ հասկանալի չէր քրիստոնեական աշխարհայեցողություն ունեցող գրիչների համար՝ սրանց կողմից ենթարկվել է զգալի ազատումների: Իրա համար էլ բնագրի ուղիղ վերծանումը և ճշտումը խիստ դժվար էր և պահանջեց ինձանից բավական ջանք ու աշխատանք:

Վերակազմված բնագրում մի քանի կետեր նաև այժմ ինձ համար մնում են մութ և խնդրական ու պետք է հուսալ, որ այդ կետերը կարելի կլինի թերևս ուղղել Վիեննայի և Վենետիկի ձևագիրների ընթերցվածների օգնությամբ:

Ծանոթությունների առթիվ անհրաժեշտ եմ համարում հիշել հետևյալը: Համեմատությունների մեջ չեն առնված ընդհանրապես ուղղագրական ընթերցվածները, որոնք վերարկերվում են *o* կամ *au* (օրինակ՝ *օդ* — *աւղ*), *n* կամ *o* (օրինակ՝ *տեսանող* — *տեսանօղ*), *յ*-ով և առանց *յ*-ի (օրինակ՝ *ջրոյ* — *ջրո*), *ը*-ով կամ առանց *ը*-ի (օրինակ՝ *մշտընջենաւոր* — *մըշտնջենաւոր*) ուղղագրություններին: Ընդունել եմ շտովորական դարձած ուղղագրությունները՝ «*օղ*», «*տեսանող*», «*ջրոյ*», «*մշտնջենաւոր*»: Ծանոթությունների մեջ մեծ մասամբ չեն հիշվում նաև պատվագրությունները:

### Յուշակ գործածված տառանիշների

*a* = Ձևագիր իմ գրադարանի (այժմ ձևագիր 9427, Պետական ձևագրատան), թվականն անհայտ:

*b* = Ձևագիր 2303/2327 Պետական ձևագրատան, գրված 1652 թվին:

*d* = Ձևագիր 419/449 Պետական ձևագրատան, գրված 1777 թվին:

*e* = Ձևագիր 538/414 Պետական ձևագրատան, գրված 1595 թվից առաջ:

*f* = Ձևագիր 2269/2285 Պետական ձևագրատան, գրված ԺԸ դարում:

*i* = Ճառքնտիր (Մխիթար Այրևիվանեցու) 1500/944 Պետական ձևագրատան, գրված XVII դարի վերջերում:



ՀԵՐՄԵԱՅ ԵՌԱՄԵԾԻ ԱՌ  
ԱՍԿՂԵՊԻՈՍ ՍԱՀՄԱՆՔ<sup>1</sup>

ОПРЕДЕЛЕНИЯ ГЕРМЕСА  
ТРИСМЕГИСТА АСКЛЕПИУ<sup>2</sup>

Աստուած իմանալի աշխարհ. աշ-  
խարհ զգալի աստուած. մարդ քակ-  
5 տելի աշխարհ: Աստուած անշար-  
ժելի աշխարհ. երկին շարժուն աշ-  
խարհ: մարդ բանաւոր աշխարհ: Ապա երեք ուրեմն աշխարհք: Արդ՝  
անշարժելի աշխարհ աստուած, իսկ  
10 բանաւոր աշխարհ մարդ. զի երկու  
միակք մի՝ աստուած և ըստ տեսա-  
կին մարդ:

Երեք, ուրեմն, աշխարհք ամե-  
նայնք. երկու միակք՝ զգալին և մի  
15 իմանալին և մի ըստ տեսակին,  
իսկ երրորդ ըստ լրութեանն: Ամե-  
նայն բազմութիւն է երկց աշխար-  
հաց. երկու տեսանելիք՝ զգալին և  
քակտելին աշխարհ մարդ, իսկ իմա-  
20 նալին է աստուած. ոչ է տեսանելի,  
այլ երևելի ի տեսանելիսս:

Որպէս անձն ի մարմնի, զոր  
առանց անձին անկար է բազկանալ՝  
այսպէս և ամենայն տեսանելիդ  
25 առանց անտեսանելոյն բազկանալ  
ոչ կարէ:

Бог есть мысленно постигаемый  
мир; мир есть чувственно воспри-  
нимаемый бог, человек есть тлен-  
ный мир. Бог есть неподвижный  
мир, небо — движущийся мир, чело-  
век — разумный мир. Итак, имеется  
три мира. Неподвижный (неизмен-  
ный) мир—это бог, а разумный мир—  
это человек, и оба они — бог и, со-  
гласно виду, человек (составляют)  
единство.

Следовательно, имеется три все-  
общих мира: (первый), чувственно  
воспринимаемый; (второй), — мыс-  
ленно постигаемый (т. е. бог) и со-  
гласно виду (человек); и третий —  
согласно полноте (целому). Все  
множество (вещей принадлежит  
этим) трем мирам; два видимых  
мира, осязаемый и тленный, суть  
человек, а познаваемый (невидимый,  
т. е. нематериальный) — есть бог,  
который незрим, но проявляется в  
зримом.

Подобно тому, как тело не может  
существовать без души, так и все  
то, что ты видишь, не может суще-  
ствовать без незримого.

Վերնագիրք. adf Հերմեա (ad Հերմա) Եռամեծի առ Ասկղեպիոս (ի առ Ասկլիպիոս)  
սահմանք. bgi Հերմիսի (i Հերմեսի) իմաստասիրի ասացեալ (շիւ սահմանք).  
e Սահմանք Հերմիսու: 3—4 b աշխարհս զգալի: 4 e գալի փխ զգալի i սգալի:  
6—7 bi երկիր շարժուն աշխարհ: 6 f շարժեալ փխ շարժուն: 8 e ապա ուրեմն  
երեք (պատվ.) b ապա (պատվ.) երեք եփի աշխարհ (g աշխարհ օ): 9 bi անշարժ: 10—11  
ad զերկու միակքն փխ զի երկու միակք մի: 11 f միակքն e մին: 11—12 f տեսականին  
փխ տեսակին: 13—14 f աշխարհ ամենայն i ամենայն: 14 ad միակքն i սգալին: 15 f  
ըստ տեսականին: 16 e և փխ իսկ f երրորդն ըստ լրականութեանն bi լրութեան: 16 17  
e ամենա [ն] բազմութիւն (պատվ.) է: 17 ad բազմութեանն է: 18 i սգալին չձ է փխ և:  
19—20 adf իմանալին այս է: 21 adf երևելի է e ի տեսանելիս: 22 f անձն ջնջոված է և  
լուսանցում զոված է հոգի adf ի մարմնի տեսակ ունելով: 23 a առ յանձինն փխ առանց  
անձին d առան յանձինն e անձինն f անհար է փխ անկար է e բազկալ փխ բազկանալ:  
24—26 d այսպէս... ոչ կար է կրկնված է: 25 ad տեսանելիք b տեսանելոյ (i տեսանելո)  
փխ անտեսանելոյն e բազկան փխ բազկանալ f լուսանցում՝ գոյանալ:

<sup>1</sup> Բնագրի սուտերեն թարգմանությունը կատարված է ակադ. Հ. Մանանդյանի  
մահվանից հետո, Մատենադարանի գիրքեղջիտի հանձնարարությամբ, Ս. Արևշատյանի  
կողմից:

Перевод с древнеармянского на русский язык сделан С. Аревшатяном по  
поручению дирекции Матенадарана после смерти акад. Я. Манандяна.



Արդ՝ է փոքրիկ աշխարհ մարդ  
 քստ անձին և շնչոյ. և աշխարհ  
 կատարեալ, որոյ մեծութիւն ոչ  
 առաւելու զգալին աստուած՝ աշ-  
 5 խարհ իմանալի. և աստուած միտք,  
 ճշմարտութեամբ անեղն, իմանա-  
 լին, էապէս անեղն և անճառելին,  
 իմանալի բարին. միանգամայն  
 ասել աստուած իմանալի աշխարհ,  
 10 անշարժ, միակ, անտեսանելի աշ-  
 խարհ, իմանալի բարի, անտեսա-  
 նելի և անճառ:

Աստուած է մշտնջենաւոր և անեղ.  
 մարդ է մահկանացու՝ կենդանի  
 15 միշտ լինելով:

Միտք է անտեսանելի բարի. անձն  
 է ամենայն մարմնոյ յարդարուն  
 հարկաւոր շարժումն: Մարմին է  
 ի քառից որակութեանց՝ մուգե-  
 20 ղեցկախառն բաղկացութիւն ի ջեր-  
 մոյ, ի ցրտոյ, ի ցամաքոյ և ի խո-  
 նաւոյ: Ի ջերմոյ՝ ի հրոյ, ի ցրտոյ՝  
 յօղոյ, ի ցամաքոյ՝ ի հողոյ, ի խո-  
 նաւոյ՝ ի ջրոյ:

Շունչ է անձին մարմին կամ ան-  
 ձին սիւն: Երկին է մարմին մըշ-  
 արնջենաւոր, մարմին անյեղեղ, ան-  
 փոփոխ՝ յանձնէ և ի մտաց խառ-  
 նեալ: Օդ է երկնի մեկուսութիւն և  
 30 երկրի, կամ երկնի և երկրի շաղ-  
 կապ:

Զբնչ է օդ: Զմիջոց երկնի և  
 երկրի օդ ասեն, քստ որում ոչ են  
 մեկնեալ ի միմեանց. քանզի միա-  
 35 լորեալ են երկինք և երկիր օդով:

И вот, есть малый мир — человек с душой и дыханием, и есть мир совершенный, который по величине не превосходит чувственно воспринимаемого бога — мысленно постигаемый мир; и есть бог-разум, самобытный по истинности, невещественный, несотворимый по сущности, неисповедимый и разумно милостивый. Одним словом, бог есть невещественный (мысленно постигаемый) мир, неподвижный, единственный, невидимый мир, разумно милостивый, незримый и неисповедимый.

Бог вечен и несотворим; человек смертен, оставаясь всегда созданием.

Разум есть незримое благо; душа есть необходимое организующее движение всякого тела. Тело (стоит) из четырех элементов; оно есть единое гармоничное соединение, (состоящее) из тепла, холода, сухости и влажности. Из тепла — огня, из холода — воздуха, из сухости — земли, из влажности — воды.

Дыхание есть тело или опора души. Небо есть тело вечное, тело нетленное, неизменное, состоящее из души и разума. Воздух есть разделение неба и земли, или же соединение (связь) неба и земли.

Что такое воздух? Расстояние (пространство) между небом и землей называется воздухом, причем они не (отделены) друг от друга, ибо небеса и земля соединяются.

1 bei չիք է bi մարդ է: 2—3 i չիք և աշխարհ կատարեալ: 4 bi արդելու փխ առաւելու af զգալին ei զգալին: 4 5 adfe աստուած աշխարհ, աշխարհ e աշխարհի: 5 ad է փխ և: 8 adf բարի փխ բարին a միանկամայն: 10 e անտելի փխ անտեսանելի i անտեսանելի փխ անտեսանելի 10—11 i անտեսանելի բարի և իմանալի փխ իմանալի բարի: 12 e չիք և i անճառելի փխ անճառ: 13 bi մեծ փխ անեղ e ամեղ փխ անեղ: 17 bi չիք ամե- նայն i մարմնոյն bi արդարուն a յարդարումն: 21 adf ի ցամաքէ b չիք և: 22 e ի ջեր- մու i ի ջրոյ փխ ի ջերմոյ a ջերմոյ փխ ի ջերմոյ i ջերմոյ փխ ի ջերմոյ e հրոյ փխ ի հրոյ: 23 i աւոտ փխ յօղոյ adf ի ցամաքէ: 26 bei նմին փխ սիւն i ի նմին փխ սիւն i երկին մարմին է: 27 e յանյեղ ad անյեղափոխ: 27—28 i անեղափոխ փխ ան- յեղեղ, անփոփոխ: 28 i անձնէ: 29 b յօղ ad մեկնութիւն փխ մեկուսութիւն: 30 i եր- կրի և երկնի d չիք և երկրի: 32 bi չիք զբնչ է օդ d զմիջին փխ զմիջոց: 33 b յօղ (i աւո) կոչեն փխ օդ ասեն: 34—35 e միաւորել: 35 de երկին a երկնի և յերկրի b զք (պատվով) երկիր (ծածկազիւ) յօղով:



Երկիր է նեցուկ աշխարհի՝ կենթա-  
կայ տարրիցն, կենդանեաց դայեակ,  
մեռելոց ընդունիչ, հրոյ և ջրոյ  
իրրև վերջին՝ դոա եղեալ յեա հրոյ  
5 և ջրոյ: Զինչ կարէ աշխարհ, գան-  
մանն այսպիսիս, որպիսիք եղեն՝  
միշտ պահեն և դմահկանացուն փո-  
փոխելով:

Զուր է սերուն գոյացութիւն,  
10 երկրի նեցուկ, իրրև թէ սնընդա-  
կան գոյացութիւն: Հուր է գոյա-  
ցութիւն անսերուն, անմարմնոցն  
տեղութիւն և մահկանացուացն  
ապականիչ, գոյացութիւն անրե-  
15 դուն, իրր թէ ապականողի հրոյ և  
աներևոյթ արարողի. և յարութիւն  
անմահիցն, ըստ որում անմահն  
անապական է՝ որ ի հրոյ ոչ ծախի,  
իսկ մահկանացուն ապականի ի  
20 հրոյ:

Լոյս է բարի և առատ տեսումն,  
տեսանելեացն ամենեցուն երևոյթ:  
Հրոյ գոյացութիւն է այրեցողու-  
թիւն: Բայց այլ է հուր և այլ է  
25 լոյս: Քանզի ընդ որ հարցի հուր՝  
ապականի, իսկ լոյս այնպիսի է  
երևոյթ, որպէս ինքն առէ: Զոր ինչ  
անձն շարժէ՝ միտքն իմանայ. ներ-  
գործութիւն իմն ելով շունչ՝ ներ-  
30 գործէ: Ոչինչ անընակ է յաստու-  
ծոյ, քանզի ուր երկիրն է՝ և աստ-  
ուած, իսկ ուր աշխարհ է՝ և երկիրն:

посредством воздуха. Земля есть  
опора мира, основание элементов,  
кормилица животных, восприемница  
умерших; как последняя (среди эле-  
ментов) огня и воды, она образо-  
валась после огня и воды. Что в  
силах мира? Уничтожая тленное,  
всегда хранить эти бессмертные  
(элементы).

Вода, как питающая сущность,  
есть опора земли, оплодотворяющая  
сущность. Огонь есть сущность  
неоплодотворяющая, хранитель бес-  
плотных (духов) и разрушитель  
смертных, сущность бесплодная,  
подобная тому, кто (желает) уни-  
чтожить огонь и (его) незримого соз-  
дателя; (огонь есть) также воскре-  
сение бессмертных, ибо бессмерт-  
ный неуничтожим и не гибнет от  
огня, а смертный погибает от него.

Светь есть доброе и щедрое зре-  
ние, обозревание всего зримого.  
Сущность огня есть горение. Но  
огонь и свет—различные (сущности),  
ибо когда огонь касается чего-ли-  
бо, сжигает; свет же есть такое  
явление, которое само говорит (за  
себя). То, что душа движет, по-  
знается разумом. Дыхание, будучи  
какой-то силой, оказывает воздей-  
ствие. Ничто не чуждо богу, ибо  
там, где есть небо, там и бог, а  
где есть мир (земля), там и небо.

1 bi երկիրն է a երկրէ և վիս երկիր է: 2 de տառիցն (af տառից) վիս տարրիցն  
b արիցն i տարրիցն a դանակ i դակի: 3 f ջրոյ և հրոյ: 4 ad եղեալ վիս եղեալ: 4—5  
f ջրոյ և հրոյ: 5 bi գինչ է վիս գինչ e կրէ վիս կարէ f աշխարհս: 6 ad որպիսիքն:  
7 ad պահել վիս պահեն adef դմահկանացուն: 7—8 adf միշտ փոփոխել վիս փոփոխելով  
e միշտ փոփոխելով: 9 e սերունդ վիս սերուն: 10 bi երկիր վիս երկրի e իրր թէ:  
10—11 bfgi շիբ թէ f անընդունակ վիս սնընդական i սնդական: 11 ad ուր վիս հուր bi  
շիբ է: 11—12 adfi գոյացութիւնն: 12 adf անմահ մարմնոյն (i անմահ մարմնոցն) վիս  
անմարմնոցն: 13 b մահկանացուաց i մահկանացուաց: 15 bd անապականոյ: 15—20 b  
շիբ և աներևոյթ... ապականի ի հրոյ: 17—18 i անմահ է և անապական (e անմահն է և  
անապական) վիս անմահն անապական է: 18 e որ ի հրու i և ի հրոյ e ծախ վիս ծախի:  
21 f լոս է begi շիբ է: 22 f տեսանելոցն: 23 դրոյ վիս հրոյ: 23—24 ade այրեցող վիս  
այրեցողութիւն f հրոյ այրեցող վիս այրեցողութիւն: 25 b ընդ ոս վիս ընդ որ: 26 e  
լոյսն a այնպիս d այնպէս ef այսպիսի i այսպէս վիս այնպիսի է: 27 f ինք նա է վիս  
ինքն առէ: 28 b շարժէ վիս շարժէ ade միտք i իմանան: 29 ad շունչն: 30 bi անընակ  
վիս անընակ է: 30—31 adef աստուծոյ: 31 a իւր վիս ուր: 32 bi իսկ ուր աշխարհ է և  
աստուած վիս իսկ ուր աշխարհ է և երկիրն:



Չաստուած յերկնի կարծեմ և  
 զերկին յաշխարհի: Բազում անբնակ  
 է ի մարդկանէ. զի ուր աշխարհ է՝  
 և երկիր, այլ ոչ յամենայնի է  
 5 մարդ: Ծով շատ է և երկիր, բայց  
 երկին մու և զոյգ ծովու և երկրի.  
 և կամէր ասել, թէ երկին զոյգ է  
 երկրի և ծովու ըստ մեծութեան,  
 որ քան երկրքին են, զի զամենայն  
 10 ինչ ի ներքս առեալ փակեաց և ի  
 ներքս արգելեալ ունի:

Երկին քան զամենեսին մեծա-  
 գոյն և արեգակն քան զերկիր և  
 զծով, զի ըստ երկոսին է տարա-  
 15 ձեալ: Բայց երկիր մեծագոյն է ծո-  
 վու, զի ի նմանէ ծով. և յերկնի  
 ամենայնքն, քանզի զվերինսն ու-  
 նի, իսկ զստորինսն ի ներքս շուրջ  
 արգելեալ ունի:

20 Աստուած նախկին բարի ամե-  
 նայն իմանալույ, աստուած իմա-  
 նալեացն հայր. երկին մարմնոյ  
 արարիչ:

Մեծութիւն արեգական լուսոյ է  
 25 երկիր և ծով, մեծութիւն երկնի՝  
 աշխարհ, մեծութիւն աշխարհի է  
 աստուած: Որք յերկնին են կեն-  
 դանիք՝ ի հրոյ և յօդոյ բաղկացեալ  
 են, իսկ որք երկրի՝ ի չորից տար-  
 30 րից: Բանաւոր կենդանի մարդ, զի  
 միտս ունի. բայց այլ ամենայն  
 կենդանիք, որք ձայնաւորք են՝

Я считаю, что бог находится на  
 небе и небо — на мире (земле).  
 Многое не заселено человеком, ибо  
 где мир, там и земля, и человек  
 пребывает не во всем (сущем). Ве-  
 лики море и земля, но одно небо  
 вдвое (больше) моря и земли. [Он  
 хотел сказать, что небо по вели-  
 чине вдвое (больше) земли и моря  
 вместе взятых, ибо оно (небо) ох-  
 ватывает собою все сущее и, храня  
 в себе, владеет (им)]\*.

Небо (по величине) больше всех,  
 а солнце больше земли и моря, ибо  
 оно распростерто над обоими. Од-  
 нако земля больше моря, ибо от  
 нее (происходит) море, и все (проис-  
 ходит) от неба, ибо (оно) владеет  
 тем, что находится наверху и, ох-  
 ватывая заключает в себе то, что  
 находится внизу.

Бог есть предвечное благо все-  
 го, что доступно разуму; бог — отец  
 мысленно постигаемых (вещей). Не-  
 бо — творец тела.

Величие солнечного света есть  
 земля и море; величие неба есть  
 мир; величие мира есть бог. Те  
 создания, которые (пребывают) на  
 небе, состоят из огня и воздуха, а  
 те, которые (находятся) на земле,  
 состоят из четырех элементов. Че-  
 ловек есть разумное создание, ибо  
 он наделен разумом, а все другие

\* Фрагмент, взятый в квадратные ско-  
 ки, повидимому, является интерполяцией  
 переписчика. (Примеч. переводчика).

1 b յերկրի փխ յերկնի bi կարծեմք: 3 adef մարդկան փխ ի մարդկանէ: 4 adf  
 երկին փխ երկիր adef ամենայն (de յամենայն) երկրի է փխ յամենայնի է: 5 a ծով զատ  
 է ի շի՛ ծով շատ է: 6 bi ժի փխ մու ad երկրի փխ և երկրի: 7 ef եթէ փխ թէ: 7-8 ef  
 շի՛ է a երկիր և ծով փխ երկրի և ծովու ի ըստ մեծութեանն: 9 f երկրեան b ամենայն ինչ  
 a զամենայնն փխ զամենայն ինչ: 10 a ի ներքս առեալ i ի ներք e առել փակեց: 12 adi  
 զամենեսեան: 12-13 e մեծագոյ adef մեծագոյն է: 14 f ըստ երկուսին: 15 f բայց եր-  
 կին: 16 be ի նմա (e նմայ) է փխ ի նմանէ f ժողով փխ ծով ի յերկրի փխ յերկնի b  
 և երկին (ծածկազիր) և յերկնի 17 e ա (պատվ.) ամենայն անքն (պատվ.) փխ ամե-  
 նայնքն b զվեցինսն փխ զվերինսն a վերինս: 18 d զստորինսս ի զստորինս a բստորինսս  
 d ի ներքս bi շի՛ շուրջ: 21 e իմանալոյ i իմանալո adf իմանալեաց: 24-25 f լուսոյ  
 (ծածկազիր) և երկրի ծով փխ լուսոյ է երկիր և ծով: 24 bi շի՛ է e և փխ է: 25 b  
 յերկնի փխ երկնի: 26 abdi աշխարհի փխ աշխարհ d մեծութիւն է աշխարհի փխ մե-  
 ծութիւն աշխարհի է e շի՛ է: 26-27 bgi շի՛ է աստուած: 27 i յերկնի ի ի յերկնի e  
 երկնի: 27-28 b և կենդանիք: 28 be ի յօդոյ e բաղկացեալք f և բաղկացեալ: 29-30  
 bi տարբերք ade տարից: 30 f բանական: 32 bfi որ փխ որք bi ձայնաւորք



զուսնչ ունին և անձն. զի ամենայն,  
որ աճէ և նուազէ՝ կենդանի է:

Եւ կենդանեացն են, որ անմահք  
և շնչաւորք են, և են, որ միտս և  
5 անձն և շուսնչ ունին, և են, որ  
միայն շուսնչ, և են, որ անձն և  
շուսնչ, և են, որ միայն կեանս: Զի  
կեանք առանց շնչոյ և մտաց և  
անձին և անմահութեան կարէ բազ-  
10 կանալ, բայց այլքն ամենեքեան  
առանց կենացն անկար է գոր:

Բան մտաց արբանեակէ. զի զոր  
կամի միտքն՝ զայն և բանն թարգ-  
մանէ: Միտք զամենայն ինչ տե-  
15 սանէ, իսկ աչք զամենայն մարմ-  
նականս: Եւ սակայն միտք աչացն  
ոչ լինի գէտ, այլ աչք մտաց:

Մտաց ոչինչ անճաս է, բանի  
ոչինչ անճասելի. լուս կալով իմա-  
20 նաս՝ խօսելով խօսիս, քանզի ի  
լուսթեան միտք յղանայ զբանն: Որ  
ի լուսթեանէ և ի մտաց բան մու-  
փրկութիւն. որ ի բանէ բան՝ ի  
կորուստ. զի վասն մարմնոյն  
25 մարդն մահկանացու, բայց վասն  
բանին՝ անմահ:

Որ զբանն ոչ իմանայ՝ միտս ոչ  
ունի. որ խօսի առանց մտաց՝  
ոչինչ ասէ. ոչինչ իմանալով՝ միտս  
30 ոչ ունի և խօսի. զի խօսելն ամ-  
